

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ԼՈՒՈՒ ՄԱՐԶ**

**ԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔ**

**ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ  
ԾՐԱԳԻՐ**

**Գ. ԱԳԱՐԱԿ**

**2016թ**

## Բովանդակություն

2.	Համայնքի իրավիճակի նկարագրություն.....	
2.1.	Համայնքի ընդհանուր նկարագրություն.....	
2.2.	Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը.....	
2.3.	Համայնքում իրականացվող ծրագրերը.....	
2.4.	Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները.	
2.5.	Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ.....	
2.6.	Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն.....	15
3.	Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում.....	18
3.1.	Համայնքի զարգացման տեսլական.....	
3.2.	Համայնքի զարգացման անմիջական նպատակներ.....	19
4.	ՀՀԶԾ ֆինանսավորում.....	20
5.	ՀՀԶԾ մոնիթորինգ.....	

## 1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Սիրով ողջունում եմ Ագարակ համայնքի ազգաբնակչությանը և բոլոր նրանց, ովքեր հեղափոխված են Ագարակ համայնքում կատարվող ծրագրերով, այս հնգամյա զարգացման ծրագրով նախատեսված ծրագրերի իրականացումով, որոնք վեր են հանվել բազմաթիվ քննարկումների ընթացքում:

Հուսով եմ, որ սատար կկանգնեք, որպեսզի կարողանանք իրականացնել մեր առջև դրված խնդիրները, համայնքը դարձնել բարեկեցիկ և զարգացած համայնք:

Կանխավ շնորհակալ եմ բոլոր այն գործարարներին, համայնքաբնակներին և շահագրգիռ կազմակերպություններին ու անհատներին, որոնք կօգնեն համայնքի զարգացման ծրագրերի իրականացմանը, հասարակական կյանքի ակտիվացման գործնթացներին:

Ագարակ համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը (այսուհետ՝ ՀԶԾ) մշակելիս ուսումնասիրվել է համայնքի նախորդ քառամյա ժամանակաշրջանի զարգացման ծրագիրը և դրա շարունակականության հնարավորությունները:

Համայնքի 2017-2021 թթ. ՀԶԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով համայնքի նորընտիր ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի դրույթները և նպատակ հետապնդելով հետևողականորեն բարեփոխումներ իրականացնելու ճանապարհով աստիճանաբար լուծել համայնքում առկա հիմնախնդիրները և բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:

ՀԶԾ-ն դիտարկելով որպես համայնքի ռազմավարական պլանավորման և մասնակցային կառավարման կարևորագույն միջոց, համայնքի ղեկավարին կից գործող ՀԶԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով խորհրդակցական մարմինը՝ փաստաթուղթը մշակելիս ձգտել է, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի ՀՀ զարգացման ծրագրերին, ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, հասարակական, կազմակերպությունների, դոնոր կազմակերպությունների և այլ շահագրգիռ անձանց հետ փոխըմբռնում ՀԶԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն՝ դրանց լուծման գործում: Որքանով մեզ դա կհաջողվի, ցույց կտա ժամանակը: ՀԶԾ-ի մեջ ընդգրկվել են համայնքի հիմնախնդիրները և գերակա պրոբլեմները, որոնք ակնկալում ենք Ձեզ հետ միասին լուծել մոտակա հինգ տարիների ընթացքում:

Ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել համայնքի առկա հնարավորությունները, ռեսուրսները, համայնքի տարածքում պատշաճ կառավարման իրականացման անհրաժեշտությունը, ինչպես նաև համայնքում աղետի ռիսկերը և դրանց կառավարման միջոցառումները:

Համայնքում առկա գերակա հիմնախնդիրները շատ են, բայց մենք առաջնահերթությունը տվել ենք

հետևյալ հիմնախնդիրներին, որոնց իրականացման արդյունքում ակնկալում ենք, որ հիմնովին կփոխվեն բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:

Դրանք են՝

1. Համայնքի դպրոցի սպորտդահլիճի կառուցումը,
2. Խմելու ջրի ջրագծի հիմնանորոգումը,
3. համայնքապետարանի տանիքի հիմնանորոգումը,
4. Մշակույթի տան կառուցումը,
5. Տրակտորի ձեռք բերում

**Գալիք հինգ տարում համայնքի զարգացման ծրագրային հիմնական ուղղություններն են**

- Բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական իրավիճակը
- Համայնքում զարգացնել գյուղատնտեսությունը
- Հատուկ ուշադրություն դարձնել կրթությանը, մշակույթի զարգացմանը
- Միջոցներ ձեռնարկել համայնքի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ.
- Բարելավել համայնքի ֆինանսական կարողությունը
- Նպատակային օգտագործել համայնքային բյուջեի միջոցները
- Բարձրացնել բնակչությանը մատուցվող ծառայությունների և սպասարկումների մակարդակը
- Նոր աշխատատեղերի ստեղծում
- 

➤ **Համայնքում առկա հիմնախնդիրները**

- Բնակչության սոցիալապես անապահով վիճակ /60%-70%/
- Առկա գյուղատնտեսական տեխնիկայի և գործիքների մաշվածություն
- Խմելու ջրի արտաքին և ներքին ցանցերի մաշվածության /ջրագծի վերակառուցում /
- Արտտավայրերի ճանապարհների անմխիթար վիճակ,
- Աշխատատեղերի բացակայություն
- Երիտասարդության և բնակչության ակտիվ հանգստի և առողջ ապրելակերպի համար պայմանների բացակայությունը

## 2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### 2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքի վարչական տարածքը՝ 1931 հա, , առկա բնակչության թվաքանակը կազմում է՝ 1385 մարդ, մշտական բնակչության թիվը՝ 1274, առկա տնտեսությունների թիվը՝ 401, առկա տնտեսություններ՝ 395:

Համայնքն իր վարչական սահմաններով սահմանակից է Յաղդան, Լեջան համայնքներին:

Համայնքը գտնվում է Ստեփանավան քաղաքից 8 կմ արևելք, մարզկենտրոնից 42 կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Ագրակ, Ակրակ, Աքրաք, Էրգրակ, Էքրեկ անվանումները: Գյուղը տեղադրված է Ձորագետի ձախ ափին, սարահարթում՝ ծովի մակերևույթից 1380մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է, տևական, ցուրտ ձմեռներով: Ամեն տարի հաստատվում է կայուն ձնածածկույթ: Ամառները տաք են , համեմատաբար խոնավ: Տարեկան թափվում են 600-700 մմ մթնոլորտային տեղումներ: Ագրոկլիմայական տեսակետից ընկած է մասնակի ոռոգման գոտում: Գյուղը դեռևս հիշատակվում է 13-րդ դարում և մտել է Գուգարք աշխարհի Տաշիրք գավառի մեջ: Ունի 19-րդ դարում կառուցված եկեղեցի: Ագարակի մոտ գտնվում է համանուն մենաստանը: Շրջակայքում կան շատ հին բնակավայրեր գործում է «Ս. Աստվածածածին» եկեղեցին:

Ագարակը 1831թ-ին ունեցել է 56, 1897թ. -ին՝ 654, 1914թ-ին՝ 999, 1939թ. -ին 1581, 1959թ-ին՝ 1366, 2016թվականին՝ 1385 բնակիչ: Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 48,8%, կանայք՝ 51,2 %:

### ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքի առկա բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները

(01.01.2016թ. դրությամբ)

Հ/հ	Ցուցանիշները	համայնք	
1.	Առկա բնակչության թիվը, այդ թվում՝	1385	
	Տղամարդիկ	684	

	<i>Կանայք</i>	<i>701</i>	
	<i>0—ից 6 տարեկան</i>	<i>89</i>	
	<i>0-ից 3 տարեկան</i>	<i>53</i>	
	<i>3-ից 6 տարեկան</i>	<i>36</i>	
	<i>7-17 տարեկան</i>	<i>142</i>	
	<i>18-63 տարեկան</i>	<i>962</i>	
<i>2.</i>	<i>Կենսաթոշակառուներ</i>	<i>231</i>	
<i>3.</i>	<i>փախստականներ</i>	<i>1</i>	
<i>4.</i>	<i>միակողմանի ծնողազուրկ երեխաներ</i>	<i>2</i>	
<i>5.</i>	<i>երկկողմանի ծնողազուրկ երեխաներ</i>	<i>-----</i>	
<i>6.</i>	<i>Հայրենական մեծ պատերազմի ,արցախյան պատերազմի մասնակիցներ</i>	<i>4</i>	
<i>7.</i>	<i>Հաշմանդամներ</i>	<i>66</i>	
	<i>այդ թվում</i>		
	<i>մանկուց հաշմանդամներ</i>	<i>5</i>	
<i>8.</i>	<i>Զբաղվածներ</i>	<i>723</i>	
<i>9.</i>	<i>առկա տնային տնտեսությունների թիվը</i>	<i>395</i>	
<i>10.</i>	<i>Նպաստառու ընտանիքների թիվը</i>	<i>37</i>	
<i>11.</i>	<i>բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների</i>	<i>35</i>	

	թիվը, այդ թվում՝		
	անօթևան ընտանիքներ	0	
12.	Արտագնա աշխատանքի մեկնող ունեցող տնային տնտեսությունների թիվը	85	
13.	Արտագնա սեզոնային աշխատանքի մեկնողների թիվը	135	

### **Ջրաղվածություն**

Համայնքի զբաղված բնակչության թվաքանակը մոտ 723 է, որից 652-ը ընդգրկված է գյուղատնտեսական գործունեության մեջ (ինքնազբաղվածություն և վարձու աշխատանք): Ոչ գյուղատնտեսական ոլորտում ընդգրկված է 71 մարդ: Մասնավորապես, պետական մարմիններում ընդգրկված է 71 մարդ, համայնքի աշխատակազմում զբաղված է 9 աշխատող (3 համայնքային ծառայող՝ 1 առաջատար, 2՝ առաջին կարգի մասնագետ), 1 հայեցողական, 2 պայմանագրային աշխատող 2 տեխնիկական սպասարկման պաշտոն զբաղեցնող: Երևանում և Վանաձորի ԲՈՒՀ-երում համայնքից սովորող ուսանողների թիվը 10-ն է: Համայնքի բնակիչներից բանակում ծառայողների թվաքանակը 15 է, որոնք բոլորը գտնվում են պարտադիր զինվորական ծառայության մեջ:

Համայնքում չեն գործում սոցիալական ծառայություններ, նոտարական գրասենյակ, ԶԱԳՍ-ի բյուրո, աղետների ռիսկերի նվազեցման համակարգող մարմին և այլ կառույցներ: Թվարկված ծառայությունները հասանելի են համայնքից 8 կմ հեռավորության վրա գտնվող փարաշաշտջանային կենտրոն Սրբեփանավան քաղաքում : Գյուղատնտեսական զբաղվածությունը համայնքում արդյունավետ չէ և դա լրջագույն պատճառ է հանդիսանում դեպի Ռուսաստան արտագնա աշխատանքի մեկնողների թվի փարեցփարի ավելանալու հարցում: Արտագնա աշխատանքի մեկնողները հիմնականում գյուղի երիտասարդներն են

- Համայնքում գործում է միջնակարգ դպրոց աշակերտների թիվը՝ 132
- Ոսուցիչների թիվը՝ 23  
Աշխատողների թիվը՝ 11  
Դպրոցը համալրված է բարձագույն կրթությամբ որակյալ մասնագետներով, բոլորը տեղացի: Դպրոցը հիմնանորոգված է:  
Համայնքում գործում է նախակրթարան՝ 11 սանով և մեկ ուսուցչով, տիպային մանկապարտեզ, որտեղ հաճախում են 23 երեխաներ, հինգ աշխատող :  
Համայնքում գործում է բուժ. կետ, այն ապահովված է որակյալ մասնագետներով, բուժկետը ապահովված չէ ժամանակակից տեխնիկական միջոցներով:  
Ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված են 37 ընտանիքներ:

## 2.2 Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

- Համայնքի ընդհանուր փարեկան բյուջեն կազմում է՝ 26185.3
- Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը՝ 20 (%)
- Համայնքի փարածքում առկա են հետևյալ արդյունաբերական ձեռնարկությունները՝  
Քարի արդյունահանում 1 գործող, չորս աշխատող
- ՀԷԿ 1 գործող, փաս աշխատող
- Համայնքի փարածքում ծառայությունների բնագավառի ձեռնարկություններն են՝  
Խանութներ-5 զբաղված են առևտրով , 5 հոգի,  
Հանրային սննդի կետ 1,զբաղված են՝ 4 հոգի  
Համայնքը համարվում է գյուղատնտեսական՝  
Հողագործություն

### Համայնքի հողափարածքները

	ՀՀ Լոռու մարզի Ագարակ համայնքի հիմնական հողային ռեսուսները	հա
1.	Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը որից՝	2702,21
2.	Բնակելի շինությունների տակի հողեր	93,56
3.	Գյուղատնտեսական նշանակության հողեր	2234,39
5.	Արդյունաբերական արտադրական շինությունների տակ հողեր,	19,36
6.	ընդերքօգտագործման հողեր	2,0
7.	ճանապարհների տակի հողեր	3,36
6.	Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր	17.27
7.	առողջապահական,հանգստավայրերի , մարզական ու պատմա մշակութային հողեր`	3,47
8.	Հատուկ պահպանվող տարածքների հողեր	3.7
9.	Ջրային հողեր	10,24
10.	անտառային ֆոնդի հողեր	304,94
11.	համայնքային այլ հողեր	30,89

Արտադրվող հիմնական գյուղատնտեսական մթերքներն են՝կարտոֆիլ, ցորեն, բանջարաբոստանային կուլտուրաներ

Հողագործություն

անվանում	հեկտար	Արտադրանքի ցենյուններ	Իրացման շուկա
կարտոֆիլ	85	17000	ՀՀ շուկա
Ցորեն	180	7200	
Բանջ.բոստ. կուլտուրաներ			ՀՀ շուկա



Պարուղ		1820	ՀՀ շուկա
Կերային կուլտուրաներ			ՀՀ շուկա

*Անասնապահություն*

Անասունների տեսակը	Գլխաքանակը
Խոշոր եղջերավոր անասուններ	904
Այդ թվում կովեր	379
Մանր եղջերավոր անասուններ	478
խոզեր	154
թռչուններ	2785
մեղվաընտանիքներ	573

*Անասնապահություն. Արտադրվող հիմնական մթերքներն են՝ կաթ, միս, բուրդ*

անվանում			Իրացման շուկա
Կաթ	լիտր	760000	ՀՀ շուկա
Միս	տոննա	11	ՀՀ շուկա
Բուրդ	կգ	500	ՀՀ շուկա

*2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը*

*Համայնքի վարչական տարածքում պետության կողմից նախորդ հինգ տարիների ընթացքում ոչ մի ծրագիր չի իրականացվել ,գալիք հինգ տարիների համար նախատեսվող ծրագրերը և*

**2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրությունը և ֆինանսական կանխատեսումները**

**Ազարակ համայնքի 2016թ.-ի բյուջեի փաստացի եկամուտները**

Եկամտատեսակներ		Ընդամենը	Վարչական բյուջե (հազ.դրամ)	Ֆոնդային բյուջե (հազ.դրամ)
	Տարեսկզբի մնացորդ	9225.321	0	9225.321
	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)	26185.3	26185.3	
	Որից սեփական եկամուտներ	5999.2	5999.2	
1.	<b>ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ,</b> այդ թվում	4179.1	4179.1	x
1.1	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար	4178.1	4172.1	x
1.2	Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների	1.0	1,0	x
1.3	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	1772.1	1772.1	x
1.4	Տեղական տուրքեր	48.0	48.0	x
1.5	Համայնքի շինությունների համար	15.0	15.0	
1.6	Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքացիական այլ օբյեկտների քանդման թույլտվության	5.0	5.0	x
1.7	Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում ոգելից	28.0	28.0	x
2.	<b>ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ,</b> այդ թվում	19648.3	19648.3	x
2.1	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ, Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ)	19648.3	19648.3	x
*				

2.3	Այլ դոտացիաներ	0	0	0.0
3.	<b>ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ.</b> այդ թվում	537.8	537.8	x
3.1	Գույքի վարձակալությունից եկամուտներ, այդ թվում համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ	507.8	507.8	x
3.2	Տեղական վճարներ	10.0	10.0	x
3.3	Այլ եկամուտներ	0	0	x
3.4	Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից	10.0	10.0	x
3.5	Վարչական գանձումներ	10.0	10.0	x

**Ագարակ համայնքի 2017թ.ի պլանավորված բյուջեի եկամուտները**

(հազ.դրամ)

	Եկամտատեսակներ	Ընդունված բյուջե	Վարչական մաս	Ֆոնդային մաս
<b>Տարեսկզբի մնացորդ</b>				
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)<sup>1</sup></b>	26185.0	26185.0	0.0
	<b>Որից սեփական եկամուտներ</b>	5998.9	5998.9	0.0
1.	<b>ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ</b>	4178.1	4178.1	x
1.1	<b>Հողի հարկ</b>	4177.8	4177.8	x
1.2	<b>Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար</b>	1.0	1.0	x

1.3	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	1772.1	1772.1	x
14	Տեղական տուրքեր	48.0	48.0	x
2.	<b>ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՆԵՐ</b>	19648.3	19648.3	0.0
2.1	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ			x
2.2	Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստների պետության կողմից փոխհատուցվող գումարներ			x
3.1	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ	537.8	537.8	x

## Աղյուսակ 7

### Ազարակ համայնքի 2016թ.-ի պլանային բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման

Բյուջետային ծախսերի անվանումները		ընդամենը (հազ.դրամ)	Այդ թվում (հազ.դրամ)	
			Վարչական բյուջե 26185.3	Ֆոնդային բյուջե 9225.321
<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ</b>		0	16459.0	1000.0
1	Ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ, այդ թվում	0		
1.1	Կառավարում	0	16459.0	1000.0
1.2	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	30.0	30.0	
1.3	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին	8629.321	404.0	8225.321

	չպատկանող)			
2.	Տնտեսական հարաբերություններ	0.0	0,0	0.0
2.1	Գյուղատնտեսություն	0.0	0.0	0.0
2.2	Ճանապարհային տրանսպորտ	0.0	0.0	0.0
3.	Շրջակա միջավայրի պահպանություն, աղբահանություն	0.0	480.0	0.0
4.	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	100.0	100.0	0.0
4.1	Ջրամատակարարում	0.0	0,0	0.0
4.2	Փողոցների լուսավորում	100.0	100.0	0.0
5.	Այլ մշակութային կազմակերպություններ	75.0	75.0	0.0
	Քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ	30.0	30.0	0.0
6.	Նախադպրոցական կրթություն	5435.0	5435.0,0	0.0
7.	Բարձրագույն կրթություն	700.0	700.0	0.0
8.	Սոցիալական պաշտպանություն	3460.0	3460.	0.0
9	Հարազատին կորցրած անձինք	500.0	500.0	0.0
10.	Ընտանիքի անդամներ և զավակներ	440.0	440.0	0.0
11.	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	2520.0	2520.0	0.0
12.	Պահուստային ֆոնդ	12.3	12.3	0.0

+

Ա	ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄ	2016	2017	2018	2019	2020	2021
1	ԵԿԱՍՈՒՏՆԵՐ	26185.3	26186.3	26247.3	26308.3	26369.3	26430.3
2	Հողի հարկ	4179.1	4179.1	4179.1	4179.1	4179.1	4179.1
3	Գույքահարկ	1772.1	1772.1	1822.1	1872.1	1922.1	1972.1
4	Վարձավճար	537.8	537.8	547.8	547.8	547.8	547.8

5	Տեղ. տուրք	48.0	48.0	48.0	58.0	68.0	78.0
6	Այլ եկամուտներ						
7	Մուտքեր հողի օտարումից						
8	Ընդամենը սեփական եկամուտներ	5999.2	5999.2	6049.2	6109.2	6169.2	6229.2
9	Պաշտոնական դրամաշնորհներ	19648.3	19649.3	19650.3	19651.3	19652.3	19653.3
F	ԾԱՆՍԵՐ	26185.3	26185.3	26245.3	26305.3	26365.3	26425.3
1	Կառավ. ապարատ ծախսեր	15893.0	15893.0	15893.0	15893.0	15893.0	15893.0
2	Գյուղատնտեսություն						
3	Շրջակա միջավայրի պաշտպանություն աղբահանություն	480.0	480.0	480.0	480.0	480.0	480.0
4	Բնակ. շինարարություն	100.0	100.0	160.0	220.0	280.0	340.0
5	Հանգիստ, մշակույթ, Կրոն	105.0	105.0	105.0	105.0	105.0	105.0
6	Կրթություն	6135.0	6135.0	6135.0	6135.0	6135.0	6135.0
7	Մոցիալական պաշտպան	3460.0	3460.0	3460.0	3460.0	3460.0	3460.0
8	Այլ խմբեր /պահուստային/	12.3	12.3	12.3	12.3	12.3	12.3

## Չարգացման խոչընդոտներ և դժվարություններ

1) Գործարար միջավայրի բարելավման և ձեռնարկատիրության խթանման հիմնական խոչընդոտող գործոններն են ֆինանսների բացակայությունը, իրացման շուկայում արտադրանքի անմրցունակ լինելը, իրացման դժվարությունները:

2) ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ, խնդրի խոչընդոտներից են համապատասխան սպորտդահլիճի, մշակույթի տան և գույքի բացակայությունը և դրանց ձեռք բերման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները:

3) համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը բարելավելու համար խոչընդոտ է աշխատատեղերի պակասը, սոցիալական օգնության ֆինանսների սակավությունը, լրացուցիչ եկամուտների ստացման բացակայությունը:

4) համայնքում բնակարանային շինարարության խթանման խոչընդոտ է համարվում ֆինանսական միջոցների բացակայությունը:

5) համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, ֆինանսական միջոցների բացակայությունը:

6) ներհամայնքային ճանապարհների պահպանման առումով կան որոշակի ֆինանսական դժվարություններ:

7) գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման համար տեխնիկայի պակաս, գյուղատնտեսության զարգացման խթանման կարևոր խոչընդոտ է գյուղատնտեսական տեխնիկայի բարձր% կազմող մաշվածությունը, ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների բացակայությունը, արտավայրեր տանող ճանապարհների ոչ բարվոք վիճակը:

8) Բեռնատար տրանսպորտային միջոցների ոչ սարքին վիճակը:

9) աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումը, խնդրի խոչընդոտներից են թաքստոցների և քաղաքացիների անհատական պաշտպանության միջոցների բացակայությունը, ազդանշանային սարքերի բացակայությունը:

10) համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպման խնդրի լուծման դժվարությունները կապված են սոցիալական վատ վիճակի և աշխատատեղերի բացակայությունը:

11) համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը, այս խնդրի իրականացման խոչընդոտ է բուժկետում ժամանակակից սարքավորումների պակասը, սոցիալական խավերի ֆինանսական ցածր հնարավորությունները:

12) համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանման դժվարությունները կապված են սոցիալական վիճակի և գիտակցական մակարդակի հետ:

## 4.2. Ներքին և արտաքին գործոնների վերլուծություն

### Ուժեղ (SWOT) վերլուծություն (ուժեղ և թույլ կողմեր)

Ներքին	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ul style="list-style-type: none"> <li>• Գազաֆիկացված է</li> <li>. Մոտիկությունը մայրուղուն</li> <li>. Բնակլիմայական գույլ պայմաններ</li> <li>. գազաֆիկացման բարձր մակարդակ.</li> <li>. հեռախոսակապի և համացանցի բարձրորակ սպասարկում</li> <li>. ոլորտային ենթակառուցվածքների առկայություն</li> <li>. առողջապահական հիմնարկի առկայություն</li> <li>. Առևտրի օբյեկտների առկայություն</li> <li>Անշարժ գույքի մատչելիություն</li> <li>. նապիադպրոցական հաստատության առկայություն</li> <li>. պատմամշակութային հարուստ ժառանգություն</li> <li>. Աշխատուժի առկայություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>. Խմելու ջրի ներքին ցանցի հիմնանորոգման անհրաժեշտություն,</li> <li>ծնելիության ցածր մակարդակ</li> <li>. Համայնքում բնակարանի խնդիրներ ունեցող բնակիչների առկայություն</li> <li>. Համայնքային ենթակառուցվածքի զույգի թարմացման անհրաժեշտություն</li> <li>• Ֆինանսական այլընտրանքային միջոցների բացակայություն</li> </ul>

### 2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (Ուժեղ) վերլուծություն



Հնարավորություններ	Վտանգներ
<p style="text-align: center;"><b>Հնարավորությունները</b></p> <p>1. Աշխատուժի առկայություն պատմական և մշակութային վայրերի առկայություն,</p>	<p style="text-align: center;"><b>Սպառնալիքներ</b></p> <p>1. Երաշտ 2. Կարկուտ 3. Վթարային շենքերի առկայություն 4. Բնակչության աճի ցածր տեմպ 5. Ծնելիության ցածր մակարդակ</p>

## 2 . Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

### 3.1 ՀԱՄԱՅՆՔԻ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆ

Ազարակ համայնքում գալիք տարիներին՝ ՀԶԾ իրականացման արդյունքում նախատեսվում է

1. Իրականացնել ծրագրեր, որոնք ուղղված բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավմանը, գյուղատնտեսության բնագավառում նախատեսվում է ձեռք բերել նոր տեխնիկա, մասնավորապես տրակտոր և այլ գյուղմեքենաներ ու գործիքներ: Համայնքի զարգացման ընթացքը իրատեսական և նպատակային լինելու համար անհրաժեշտ ենք համարում բնակչության բնական և արհեստական աճը: Գործարար միջավայրի բարելավումը, աշխատատեղերի ստեղծումը, գյուղատնտեսության ինտենսիվացումը մեծ խթան կլինեն համայնքում ծնելիությանը և բազմազավակությանը, ինչպես նաև բնակչության ներհոսքին: Բազմազավակությանը և ծնելիությանը խթանելու համար նախատեսվում է նաև ֆինանսական օգնության իրականացում, նոր ծնված երեխաների ընտանիքներին ֆինանսական աջակցություն: Կշարունակվի պարբերական և հաստատուն աղբահանության իրականացում:
2. Երիտասարդության առողջ ապրելակերպի և ֆիզիկական դաստիարակության համար նախատեսվում է դպրոցում սպորտդահլիճի կառուցում, որից կօգտվեն ոչ միայն աշակերտները, այլև գյուղի երիտասարդությունը:
3. Մշակույթի տան կառուցումով նախատեսվում է երիտասարդության ակտիվ մշակույթային և մարզական միջոցառումների կազմակերպում, նաև մշակութային խմբակների ստեղծում:
4. Համայնքի ենթակառուցվածքի մասով նախատեսվում է ջրամատակարարման խողովակաշարի 4 կմ հիմնանորոգում: /
5. Երիտասանդության ներգրավմամբ նախատեսվում է ակտիվ մշակույթային և մարզական միջոցառումների կազմակերպում, ժամանցի կենտրոնների ստեղծում, մարզական և մշակույթային խմբակների ստեղծում:
6. Համայնքի բնակավայրի կառուցապատման, բարեկարգման և կանաչապատման մասով նախատեսվում է կանաչապատ տարածքների ավելացում՝ ծառատունկ, արդիականացման աշխատանքներ, փողոցների մաքրման աշխատանքներ:
7. Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսման բնագավառում նախատեսվում է սպորտային միջոցառումների, սպորտլանդիաների անցկացում, միջհամայնքային մրցումների անցկացում:
8. Նախադպրոցական դաստիարակության բնագավառում նախատեսվում է՝ մանկապարտեզի նոր գույքի և սարքավորումների ձեռք բերում, մանկապարտեզ հաճախող երեխաների թվի ավելացում և պայմանների բարելավում:
9. Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառում նախատեսում է՝ դասընթացների կազմակերպում, բնակչությանն իրազեկման ազդանշանային սարքավորումների տեղադրում, պարզագույն թաքստոցների կառուցում:
10. Պետական պաշտպանության աջակցման բնագավառում նախատեսվում է ռազմահայրենասիրական միջոցառումների իրականացում, բանակային կյանքին վերաբերվող

11. հարցերի լուսաբանում, զինապարտների պարբերական հաշվառում և զինկոմիսարիատների հետ փոխհամագործակցություն:
12. Համայնքի սոցիալական պաշտպանության բնագավառում նախատեսվում է սոցիալական նպաստների տրամադրում, ֆինանսական օգնության տրամադրում «Փարոս» համակարգում չընդգրկված, սակայն սոցիալապես ոչ բարվոք վիճակում գտնվող ընտանիքներին: Նախատեսվում է նաև բարեգործական կազմակերպությունների միջոցով որոշակի օժանդակություն /սննդի, գույքի տեսքով և այլն/:

### 3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

1. Համայնքի գույքի և դրամական միջոցների կառավարման նպատակն է համայնքային բյուջեի ավելացումը, համայնքային գույքի պահպանումը, իրականացվող ծրագիրը նպատակ ունի համայնքային մշակույթի տան կառուցմանը, դպրոցի սպերտդահլիճի կառուցումը:
2. Ակտիվ մշակութային և մարզական միջոցառումները միտված են երիտասարդության ակտիվացմանը, հայրենասիրության բարձրացմանը, առողջ ապրելակերպի ու համայնքային մտածողության բարձրացմանը:
3. Աղետների ռիսկերի նվազեցման և քաղ. պաշտպանության միջոցառումների շնորհիվ կապահովվի բնակչության անվտանգությունը և բնականոն կյանքի գործունեությունը:
4. Գյուղատնտեսության բնագավառի ծրագրերը նպատակ ունեն հողի արդյունավետ մշակման, գյուղ մթերքների առատության, իրացման շուկայում մրցունակության բարձրացման, բնակչության սոցիալական և ֆինանսական վիճակի բարելավման, գյուղացիական տնտեսությունների եկամուտների աճ հնգամյակի ընթացքում 10-ից մինչև 20 տոկոս:
5. Համայնքի բնակավայրի կառուցապատման, բարեկարգման նպատակն է ունենալ գեղեցիկ և բարենորոգված, ժամանակակից ենթակառուցվածքով և շինություններով մաքուր համայնք: Համայնքի գույքի և դրամական միջոցների կառավարման նպատակն է համայնքային բյուջեի ավելացումը, համայնքային գույքի պահպանումը, իրականացվող ծրագիրը նպատակ ունի համայնքային գույքի, ենթակառուցվածքների պահպանումը, նորերի ստեղծումը, մշտական հոսող ջրով ապահովումը:
2. Ակտիվ մշակութային և մարզական միջոցառումները միտված են երիտասարդության ակտիվացմանը, վերանորոգված խաղասենյակի առկայությունը կնպաստի գիտելիքների ավելացմանը, հայրենասիրության բարձրացմանը, առողջ ապրելակերպի ու համայնքային մտածողության բարձրացմանը:
3. Աղետների ռիսկերի նվազեցման և քաղ. պաշտպանության միջոցառումների շնորհիվ կապահովվի բնակչության անվտանգությունը և բնականոն կյանքի գործունեությունը:
5. Գյուղատնտեսության բնագավառի ծրագրերը նպատակ ունեն նոր տեխնիկայի և գյուղգործիքների ձեռք բերմամբ հասնելու գյուղ մթերքների առատության, իրացման շուկայում մրցունակության բարձրացման, բնակչության սոցիալական և ֆինանսական վիճակի բարելավման, գյուղացիական տնտեսությունների եկամուտների աճի` հնգամյակի ընթացքում 10-ից մինչև 20 տոկոս:

6. Համայնքի բնակավայրի կառուցապատման, բարեկարգման նպատակն է ունենալ փողոցային լուսավորության լապտերների ավելացում 20-ից 60 կետով , ժամանակակից ենթակառույցներով և շինություններով մաքուր՝ համայնք, որտեղ աղբատար մեքենայով աղբը պարբերաբար հեռացվում է համայնքից:

#### **4. ՀՀԶԾ ֆինանսավորումը**

Պարտադիր խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի ֆինանսավորումը իրականացվում է /ըստ անձնագրերի/

**1. ՀԱՄԱՅՆՔԻ ԴՊՐՈՑԻ ՍՊՈՐՏԴԱՎՈՒՄ – պետական, բարեգործական կազմակերպությունների և այլ ֆինանսական միջոցների հաշվին**

**2. ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՋՐԱԳԾԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ –** նախատեսվում է իրականացնել պետության, այլ միջոցներով , համայնքի ներդրումներով:

**3. ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՏԱՆԻՔԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ –** իրականացվում է համայնքի բյուջեի միջոցներով

**4. ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՈՒՄ –** իրականացվում է պետական, այլ միջոցներով

**5. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ-ՏԵԽՆԻԿԱՅԻ ՏՐԱԿՏՈՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ –** իրականացվում է համայնքապետարանի կողմից 5% ներդրմամբ գոյացած ֆինանսական միջոցներով,

**5. ՀՀԶԾ-ի մոնիթորինգը** - իրականացվում է հարցումների և փաստերի ուսումնասիրության հիման վրա, որով գնահատվում է զարգացման ծրագրերի անձնագրերով նախատեսված ցուցանիշների իրական լինելը, ծրագրի իրականացման արդյունավետությունը, բնակչության սոցիալական վիճակի փոփոխությունը : Հսկվում է ծրագրի իրականացման ընթացքը: Յուրաքանչյուր ծրագրի նակատմամբ իրականացված մոնիթորինգի ցուցանիշը նշված է մոնիթորինգի վերաբերյալ հավելվածում՝ ըստ տարիների և թիրախային արժեքների:

**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր 1**

**«Համայնքի դպրոցի սպորտդահլիճի կառուցում»**

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Ազարակ համայնքում խթանել երիտասարդության ֆիզիկական դաստիարակությունը						
Ծրագրի անմիջական նպատակ	Մշակույթի գեղեցիկ և բարեկարգ տուն ունենալը						
	Ցուցանիշներ Եկամտի աճ(%)	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
	Նոր կառուցված մշակույթի տուն	2016 0	2017 0	2018 0	2019 0	2020 1	2021 1
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Մշակույթի տան նախագիծ ունենալը						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016 0	2017 0	2018 0	2019 0	2020 1	2021 1
	2. նոր նշակույթի տուն						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
	ձեռք բերված նախագիծ	2016 0	2017 0	2018 0	2019 0	2020 1	2021 1
Ծրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>.</p> <p>1.1 նախագծի պատվիրում</p> <p>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>2.1 - ձեռք բերել շինանյութ</p> <p>2.2 մշակույթի տան կառուցում</p>						

Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 100 մլն դրամ  Կապիտալ ծախսեր՝ 150 մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 250 մլն դրամ՝
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, մեխանիզացիա, դրամական միջոցներ
Ծրագրի հիմնական ռիսկերը	դրամական միջոցների ձեռքբերումը
Ծրագրի հիմնական շահառուները	Ազարակ համայնքի բոլոր բնակիչները:
Ծրագրի սկիզբ և ավարտ	Սկիզբ՝ 2020թ.- Ավարտ՝ 2021թ.
Ծրագրի համառոտ նկարագրություն	

**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր 2**

**« Խմելու ջրի ջրագծի վերակառուցում»**  
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Ազարակ համայնքում ապահովել որակյալ և անկորուստ ջրագիծ						
Ծրագրի անմիջական նպատակ	Համայնքաբնակներին բավարար քանակի մանրէազերծված ջրով ապահովում						
	Ցուցանիշներ աճ (%)	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	0	0	1	1	0	0	
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. ջրագծի հիմնանորոգման նախագիծ ունենալը						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
	ձեռք բերված նախագիծ	2016	2017	2018	2019	2020	2021
							0
	2. Վերակառուցված ջրագիծ						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
կառուցված ջրագիծ մետր	2016	2017	2018	2019	2020	2021	
	0	0	1000	1000	0	0	
Ծրագրի հիմնական գործողությունները	<p>1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>1.1. Գործող ջրագծի վնասված խողովակները փոխարինել նորով:</p> <p>1.3. Տեղադրել փականով բաժանարարները՝ բաշխումը կատարելով հավասարաչափ:</p> <p>1.4 Պարբերաբար կատարել խմելու ջրի մանրէազերծում սանէպիդիկենտրոնի օգնությամբ:</p> <p>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ</p> <p>2.1. Ձեռք բերել ազբոխողովակներ և փականներ ջրմուղ կոյուղու համար:</p> <p>2.2. Խողովակները միացնել:</p>						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 10 մլն դրամ Կապիտալ ծախսեր՝ 10 մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 20 մլն դրամ:						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, մեխանիզացիա, դրամական միջոցներ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	դրամական միջոցների ձեռքբերումը						
Ծրագրի հիմնական շահառուները	Ազարակ համայնքի բոլոր բնակիչները:						
Ծրագրի սկիզբ և ավարտ	Սկիզբ՝ 2018թ.- Ավարտ՝ 2019թ.						
Ծրագրի համառոտ	Ներկայումս համայնքում ջրի խողովակաշարը գտնվում է անմխիթար վիճակում և ջրի						

նկարագրություն	որակը չի բավարարում բնակչությանը: 10%-ը ջուր չունեն: Ծրագրի իրականացումից հետո համայնքի բոլոր բնակիչները կապահովվեն բավարար քանակի մաքուր ջրով: Համայնքը չունի ջրմուղ-կոյուղի և շահառուներն օգտվում են դրսի սան-հանգույցներից: Ծրագրի իրականացմամբ համայնքի բոլոր շահառուները կօգտվեն մաքուր ջրից: Համայնքում առկա հիվանդությունների վտանգը կվերանա, կոմունալ տնտեսությունը կզարգանա:
----------------	---



**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր 3**

**« Համայնքապետարանի տանիքի հիմնանորոգում »**

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	<b>Համայնքային գույքի կառավարում</b>						
Ծրագրի անմիջական նպատակ	ապահով և բարեկարգ տանիք ունենալը						
	<b>Ցուցանիշներ</b>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	հիմնանորոգված տանիք	0	1	0	0	0	0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.Նախագծի ձեռք բերում						
	<b>Ցուցանիշներ</b>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	ձեռք բերված նախագիծ	0	1	0	0	0	0
	1.						
	<b>Ցուցանիշներ</b>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
	2016	2017	2018	2019	2020	2021	
Տանիքի բարեկարգում	0	1	0	0	0	0	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.անհրաժեշտ շինանյութերի ձեռքբերումը 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1.Ֆինանսական միջոցների ձեռք բերում 2.2 Որակյալ տանիք ունենալը						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 1. մլն դրամ Կապիտալ ծախսեր՝ 2մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝3մլն դրամ.						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	1. մարդկային կապիտալի պակաս						
Ծրագրի հիմնական ռիսկերը	չնախատեսված իրավիճակ						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչություն , համայնք						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017թ-						

<p>Ծրագրի համառոտ նկարագրություն</p>	<p>Նախատեսվում է հիմնովին վերանորոգել համայնքապետարանի տանիքը</p>
--------------------------------------	---

**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր 4**

**«Մշակույթի տան կառուցումը»**

(Ծրագրիանվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Բնակչության մշակութային կյանքի ակտիվացումը, համայնքում կազմակերպվող միջոցառումների, համերգների անցկացման համար շենքի առկայությունը						
Ծրագրի անմիջական նպատակ	Համայնքաբնակների մշակութային կյանքի ակտիվացման ապահովում:						
	Ցուցանիշներ աճ(%)	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	0	0	0	0	0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. ծրագրի համար նախագիծ ունենալը						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	0	0	0	1	0
	2. Գույքով և կահավորանքով հագեցած մշակույթի տուն						
	Ցուցանիշներ (%)	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
0		00	0	0	0	100	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. նախագծի պատվիրում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Ձեռք բերել անհրաժեշտ շինանյութեր 2.2 մշակույթի տան կառուցում: 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Ձեռք բերել անհրաժեշտ շինանյութ 2.2. Մշակույթի տան կառուցում :						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 100 մլն դրամ Կապիտալ ծախսեր՝ 100 մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 250 մլն դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, տրանսպորտ, դրամական միջոցներ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	դրամական միջոցների ձեռքբերումը						
Ծրագրի հիմնական շահառուները	Ազարակ համայնքի բոլոր բնակիչները:						
Ծրագրի սկիզբ և ավարտ	Սկիզբ՝ 2020թ. - Ավարտ՝ 2021թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Այժմ համայնքի բնակչությունը զրկված է մշակութային կյանքին հետևելուց: Ծրագրի իրականացումից հետո համայնքի բնակչությունը կմասնակցեն մարզային, հանրապետական համերգային և այլ միջոցառումների դիտումից: Կակտիվանա համայնքի մշակութային կյանքը:						

**Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր 5**

**«Գյուղտեխնիկայի ձեռքբերում»**

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Գյուղատնտեսության զարգացման խթանում						
Ծրագրի անմիջական նպատակ	Գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացում						
	<b>Ցուցանիշներ</b>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Գյուղատնտեսությունից եկամուտ ստացող տնային տնտեսությունների եկամուտների աճ%-ով	0	10	15	20	25	30	
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Բնակիչների գիտելիքների ավելացում գյուղատնտեսության բնագավառում						
	<b>Ցուցանիշներ</b>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	Գյուղատնտեսության բնագավառում շահագրգիռ տնտեսությունների աճ%-ներով	0	10	15	20	25	30
	2. Բարձր արտադրողական և ժամանակակից գյուղ. տեխնիկայի ունենալը						
	<b>Ցուցանիշներ</b>	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
Բերքի անկորուստ հավաքման աճ%-ով	0	10	15	20	25	30	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1 դաշնային կազմակերպում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1 Ֆինանսական միջոցների ձեռք բերում 2.2 Բարձր արտադրողական մեկ կտրակտորի ձեռք բերում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 1.2 մլրդ դրամ Կապիտալ ծախսեր՝ 38 մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 39.2 մլն դրամ.						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	1. Համայնքի բյուջե 2. Ֆինանսական միջոցներ տրամադրող դոնոր կազմակերպության առկայություն 2. այլ 3. մշակվող վարելահողերի առկայություն						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Դոնոր կազմակերպության կողմից չնախատեսված իրավիճակ						

Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչություն , համայնք
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017թ- 2018թ
Ծրագրի համառոտ նկարագրություն	Նախատեսվում է գյուղատնտեսական հողերի մշակման բարձրացում, ժամանակակից բարձր արտադրողական մեկ տրակտորի ձեռք բերում,որի շնորհիվ բերքի կորուստը կկրճատվի և բնակչության եկամուտները կավելանան 30% և ավելի:











